ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴԱՎԻԹ ԱԼԲԵՐՏԻ ՊՈՂՈՍՅԱՆ

ԹԱՆԳԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ. ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ, ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ (ՀՀ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԺԳ. 00. 02- «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ **Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ.Ս. Ներսիսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Պ. Հովակիմյան**

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Վ. Բաղդասարյան

Առաջատար կազմակերպություն՝ **Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2015թ. մարտի 26-ին, ժամը 12:00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի 020 «Մանկավարժություն» մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2015 թ.-ի փետրվարի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Ս.Հ. ՍՎԱՋՅԱՆ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Արդի հարափոփոխ աշխարհում, ուր տեղեկատվական հոսքերը վերածվել են կյանքի վերափոխման ազդեցիկ գործոնի, նորովի է արժևորվում թանգարանի հասարակական առաքելությունը: Վերջինս տեղեկատվության պասսիվ փոխանցողից աստիճանաբար վերածվում է սոցիալ-մշակութային գործունեության ակտիվ տարածքի՝ կրթական առաքելությամբ: Այս առումով սույն ատենախոսությամբ փորձ է արվում թանգարանը դիտարկել որպես սոցիալ-մշակութային գործառույթներ իրականացնող ինքնատիպ տեղեկատվական-հաղորդակցական համակարգ: Այսօրինակ մոտեցումը թույլ կտա բարձրացնել թանգարանային գործի արդյունավետությունը մշակույթի և կրթության ոլորտում պետական քաղաքականության իրականացման, կրթական բարեփոխումների գործընթացներում, ինչպես նաև ձևավորել թանգարանի համընդհանուր կրթական առաքելության իրականացման նոր գիտական ընկալումներ:

Արդի թանգարանների ակտիվ սոցիալական դերակատարության հանդեպ հետաքրքրությունը, դրանց նորովի ընկալման, սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներով օգտագործման պահանջները նկատելի են նաև ՀՀ թանգարանային ոլորտում: Այսուհանդերձ, թանգարանների անհամաչափ զարգացումը, որակյալ կադրերի պակասը, անարդյունավետ, հաճախ նաև ձևական կազմակերպվող կրթամշակութային միջոցառումները մասնագիտական ոլորտի վերափոխման, դրական փորձառության վրա հիմնված նոր թանգարանային մոդելների ներդրման անհրաժեշտություն են առաջադրում: Ելնելով նման իրավիճակից՝ սույն ուսումնասիրության մեջ առաջարկվում է թանգարանի կրթամշակութային ներուժն օգտագործել՝ ի նպաստ մշակութային ժառանգության՝ իր բնական միջավայրում, ամբողջական թանգարանացման և շրջակա համայնքներում արժևորման: Այս առումով հետազոտության առանցքում են դպրոցներում թանգարանային տարածքների, խմբակների և այլ կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը և մասնագետների պատրաստումն ու թանգարանների կրթական առաքելության արդյունավետ իրականացման ուղղությամբ գիտելիքների, կարողությունների փոխանցումը: Մասնավորապես անցյալի ու ներկայի մի շարք հայտնի գիտնականների, փորձառու մասնագետների աշխատությունները հիմք են ծառայում ձևակերպելու.

- Հանրության թանգարանային պահանջմունքների ձևավորման, ինչպես նաև տարբեր սոցիալ-մշակութային իրողություններում թանգարանի կրթահաղորդակցական գործառույթների փոխակերպման վերաբերյալ տեսական մոտեցումներ (Զ. Ստրանսկի (1991), Մ. Գնեդովսկի (1989), Ք. Հադսոն (2001), Ե. Ալեքսանդր (2008), Կ. Ղաֆադարյան (1972), Լ. Բարսեղյան (2010) և այլք):
- Սոցիալ-մշակութային հաղորդակցության դրույթների և հայեցակարգերի թանգարանագիտական մեկնաբանումներ (Մ. Մակլուեն (1969), Դ. Կամերոն

(1968), Ե. Հուպեր-Գրինհիլ (2007), Ժ. Ռիվիեռ (1985), Մ. Գնեդովսկի (2001), Բ. Ստոլյարով (2004), Յու. Լոտման (2000), Ս. Սոտնիկովա (2004), Ու. Քրիստոֆեր (1997), Օ. Բեզզուբովա (2004) և այլք):

- ՀՀ թանգարանների կրթամշակութային գործունեության տեղեկատվական-հաղորդակցական կողմին առնչվող փորձառություն և գիտական մոտեցումներ, ինչպես նաև դրանց գեղարվեստական կրթության ոլորտում կիրառման հնարավորություններ (Կ.Ղաֆադարյան (1974), Լ. Բարսեղյան (1984), Ժ. Աղամիրյան (1979), Լ. Ներսիսյան (2002), Հ. Պիկիչյան (2005), Ա. Գրիգորյան (2010), Մ. Հարոյան (2012) և այլք):
- Թանգարանային հաղորդակցության դրսևորման հիմնական միջավայրերի և միջոցների վերլուծություն թանգարանի կրթական գործունեության համատեքստում (Տ. Պոլյակով (1997), Շ. Էննիս (1986), Ք. Մակլին (1993), Ն. Նիկիշին (1989), Մ. Յուխնևիչ (2001) և այլք):

Մեզանում սույն խնդիրների արդիականությամբ ու ոչ լիարժեք **մշակվածությամբ** էլ պայմանավորվում է հետազոտության թեման՝ «Թանգարանը որպես տեղեկատվական-հաղորդակցական համակարգ. գործառույթները, զարգացման հեռանկարները (ՀՀ թանգարանների օրինակով)»:

Հետազոտության նպատակը: Ձևավորել նոր մեթոդաբանական հիմք ՀՀ տարածքում գործող թանգարանների հանար: Բացահայտել, հիմնավորել վերջիններսի՝ որպես տեղեկատվական-հաղորդակցական և մշակութաբանական-կրթական համակարգերի գործառույթները, զարգացման հեռանկարները:

Հետազոտության օբյեկտը: Թանգարանային միջավայրում ընթացող սոցիալ-մշակութային հաղորդակցության գործընթացն է:

Հետազոտության առարկան: Թանգարանային տեղեկատվական-հաղորդակցական համակարգն է՝ իր կառուցվածքով, գործառույթներով և զարգացման հեռանկարներով:

Հետազոտության վարկածը: Թանգարանային տեղեկատվական-հաղորդակցական համակարգը՝ որպես բազմագործառութային, կրթահաղորդակցական միջավայր, արդյունավետ կլինի, եթե.

- դրա գործառույթները հիմնավորվեն ՀՀ և արտերկրյա թանգարանային գործի ավանդների յուրացմամբ՝ ելնելով պատմականորեն արտահայտվող հիմնական օրինաչափություններից,
- մշակվեն և կիրառվեն թանգարանի կրթամշակութային գործունեության արդյունավետ եղանակներ՝ ելնելով արդի սոցիալ-մշակութային պահանջմունքների հետազոտությունից և վերլուծությունից,
- բացահայտվեն թանգարանային հաղորդակցության յուրահատուկ դերն աշխարհընկալման ձևավորման գործընթացում:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար հետազոտության մեջ առաջադրվում են հետևյալ **խնդիրները**.

- Վերլուծել սոցիալ-մշակութային հաղորդակցության գործընթացները թանգարանի ձևավորման փուլերում:
- Բացահայտել թանգարանների՝ որպես տեղեկատվական-հաղորդակցական համակարգերի կրթական առաքելությունը:
- Բացահայտել և հիմնավորել թանգարանային հավաքածուի, ցուցադրական միջավայրի տեղեկատվահաղորդակցական, կրթական գործառույթները:
- Համակարգել թանգարանի կրթամշակութային գործունեության եղանակները՝ որպես թանգարանում և թանգարանային միջոցներով իրականացվող գեղարվեստական կրթության հարացույց:
- Հիմնավորել թանգարանային անձնակազմի պատրաստման կարևորությունը ոլորտի զարգացման համար և առաջարկվող մոդելի արդյունավետությունը:

<u>Հետազոտության տեսական ու մեթոդաբանական հիմքը</u> ձևավորվել է թանգարանագիտության, թանգարանային մանկավարժության, մշակութաբանության, սոցիալ-մշակութային հաղորդակցության և այլ գիտական ոլորտներում առկա տարբեր ձևատեսությունների, գիտական մոտեցումների համադրման և համալիր մեթոդների կիրառման եղանակով: Մասնավորապես կիրառվել են հետևյալ <u>մեթոդները</u>.

- աղբյուրների և մասնագիտական տեսակետների վերլուծության և տեսական ընդհանրացման
- արտերկրյա թանգարանային գործի և մեզանում առկա մասնագիտական զարգացումների համեմատության
- ՀՀ տարբեր թանգարանների համապատասխան փորձի, կադրերի պատրաստման, վերապատրաստման, թանգարանների կրթական ներուժի վերլուծության
- կրթամշակութային նախագծերի կազմման, հատուկ լսարանների դիտման և նրանց շրջանում հարցումների անցկացման, հարցաթերթերի լրացման փորձարարական
- թանգարանների աշխատանքային արդյունքների, մեթոդների վերլուծության, զարգացման հայեցակարգերի, ծրագրեր մշակման փորձարարական:

<u>Հետազոտությունն ընթացել է 2 հիմնական փուլերով</u>:

<u>Առաջին փուլում (2006-2008 թթ.)</u> կատարվել են գրականության և տվյալ հիմնախնդրին վերաբերող հետազոտությունների ուսումնասիրությունը, թանգարանային փորձի վերլուծությունը, հետազոտության նպատակների և խնդիրների որոշում:

<u>Երկրորդ փուլում (2010-2014 թթ.)</u> մշակվել և գործնական ոլորտ են ներդրվել հետազոտության արդյունքները, ձևավորվել է ատենախոսության: Այս փուլում է իրականացվել նաև <u>գիտափորձը</u> («Զվարթնոց», «Գառնի», «Գլաձորի համալսարան» պատմամշակութային արգելոց-թանգարաններում): Վերջինիս համար հիմք են հանդիսացել ՀՀ տարբեր թանգարանների կրթամշակութային գործունեութ-

յունը (Հայաստանի ազգային պատկերասրահ, Երևան քաղաքի պատմության թանգարան, Հովհաննես Թումանյանի թանգարան, Արամ Խաչատրյանի տուն-թանգարան և այլն):

Հետազոտության գիտական նորույթը:

- Ձևավորվել է ՀՀ թանգարանների գործունեություն նոր մեթոդաբանական հիմք, գիտականորեն հիմնավորվել դրանց կրթական առաքելությունը:
- Մշակվել է ՀՀ թանգարանների զարգացման նոր հայեցակարգ՝ միտված հասարակության գեղագիտական աշխարհայացքի ձևավորմանը:
- Բացահայտվել և տեսականորեն հիմնավորվել է ՀՀ թանգարանների՝ որպես տեղեկատվական-հաղորդակցական համակարգերի գործառույթները, զարգացման հեռանկարները:

Հետազոտության տեսական նշանակությունը: Թանգարանագիտության, մշակութաբանության, մշակութային հաղորդակցության տեսության, գեղարվեստական կրթության, թանգարանային մանկավարժության և այլ գիտական ոլորտների համադրման արդյունքում ներկայացվող հետազոտությունը կարող է լրացնել մեր թանգարանային մշակույթում առկա տեսական, մեթոդական աշխատանքների պակասը՝ հատկապես ցուցադրության, կրթական գործունեության տարբեր ձևերի կազմակերպման գործընթացներում:

Թանգարանային հաղորդակցության հիմնադրույթների հիման վրա կառուցվող ատենախոսությունը հավակնություն ունի վերածվելու ՀՀ թանգարանների կրթական գործունեության կազմակերպման նոր մեթոդական հիմքի:

Հետազոտությունն օգտակար կարող է լինել թանգարանային գործի բազմակողմանի կամ առանձին բնագավառների հետագա ուսումնասիրման համար: Հատկապես մանկավարժական գիտությունների ոլորտում առաջին անգամ է համակարգային քննարկման ենթարկվում ՀՀ թանգարանների կրթական ներուժի օգտագործման եղանակները, որն ինքնին առաջադրում է թանգարանի կրթամշակութային գործունեության տարբեր հարցերի հետ կապված հետագա ուսումնասիրությունների ծավալման հեռանկարներ:

Հետազոտության գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ շարադրված սկզբունքներն ու հետազոտության արդյունքները կիրառելի են ՀՀ թանգարանային գործնական ոլորտում, հանրակրթության բնագավառում, ինչպես նաև մշակութային ժառանգության հանրահռչակման ու մշակութաճանաչողական զբոսաշրջության զարգացման մեխանիզմներում:

Թանգարանի և տարբեր կրթական հաստատությունների համագործակցության, համատեղ ծրագրերի իրականացման առումով հետազոտությունը կարող է վերածվել մեթոդական նյութի՝ շեշտադրելով թանգարանի կարևորը դերը կրթադաստիարակչական, հատկապես գեղարվեստական կրթության տարբեր գործընթացներում:

Գործնական նշանակություն ունի աշխատանքի հիմնական դրույթների կիրառումը հանրապետության տարբեր բուհերում «Թանգարանագիտություն», «Տեղեկատվությունը և հաղորդակցությունը թանգարանում», «Թանգարանային մանկավարժություն», «Թանգարանային գործի կազմակերպում», «Նորագույն տեխնոլոգիաները և տեխնիկական միջոցները թանգարանում» և հարակից առարկաների դասավանդման գործընթացներում:

<u>Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.</u>

1. Հետխորհրդային տարիների աշխարհայացքային, տնտեսական, սոցիալական և մշակութային փոփոխություններն առավել նպատակային են դարձնում ՀՀ թանգարանները դիտարկել որպես սոցիալ-մշակութային հաղորդակցության համակարգեր՝ կարևորելով հետևյալ իրողությունները.

– Թանգարանային ֆոնդադարանն այն հատուկ միջավայրը կամ նշանային համակարգն է, որտեղ որոշակի որակական հատկանիշների կամ տեքստային բովանդակության շնորհիվ առաջնահերթորեն դրսևորվում է թանգարանային առարկան, և որն անմիջական կամ միջնորդավորված եղանակներով գործում է որպես տեղեկատվական-հաղորդակցական թանգարանային միջոց:
– Արդի թանգարանային ցուցադրությունը վերածվում է այլընտրանքային և ինտերակտիվ կրթահաղորդակցական միջավայրի: Այն հնարավորություն ունի համատեղելու զանազան նշանային համակարգեր և ընկալման տարբեր ունակություններով սուբյեկտների ներգրավել թանգարանային հաղորդակցության գործընթացներում:

2. Արդի թանգարանի գործունեության արդյունավետությունը պայմանավորվում է երկու հիմնական ռեսուրսների զարգացման գործոնով.

– Թանգարանի զարգացման գլխավոր ներուժն այն սուբյեկտների խումբն է (աշխատակազմ), որի գործունեության ու հետազոտության շնորհիվ ստեղծվում և շարունակաբար գործում է թանգարանային հաղորդակցության միջավայրը:
– Երկրորդ գլխավոր ռեսուրսը թանգարանային հավաքածուն է, որի ձևավորումը և արդյունավետ օգտագործումը ևս պայմանավորված է թանգարանային անձնակազմի գործունեությամբ, նպատակներով, հանրակրթության ոլորտում թանգարանի կրթադաստիարակչական հնարավորություններ կիրառմամբ:

<u>Հետազոտության փորձաքննությունը:</u> Ներկայացվող դրույթները մասնագիտական, մանկավարժական համապատասխան փորձաքննություն են անցել:

Ատենախոսության հիմնադրույթները որոշակիորեն կիրառվել են թանգարանային մասնագետների պատրաստման ոլորտում: Մասնավորապես, 2010թ. սեպտեմբեր ամսից համապատասխան ուսումնական ծրագրերի հիման վրա Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն բաժնի 4-րդ կուրսում

և մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերում «Նորագույն տեխնոլոգիաները և տեխնիկական միջոցները թանգարանում», «Հաղորդակցությունը և տեղեկատվությունը թանգարանում», «Արգելոց-թանգարանների և էկոթանգարանների կազմակերպման հիմունքներ» առարկաների դասավանդման ընթացքում հետազոտության տարբեր գլուխներում ընդգրկված գիտատեսական նյութերը ներդրվել է ուսումնական գործընթացում:

Աշխատանքի նախնական փորձաքննությունը կատարվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի 2013թ. փետրվարի 8-ի ընդլայնված նիստում:

Աշխատության տարբեր գլուխներում արտահայտված դրույթները հրատարակվել են ինը գիտական հոդվածներում և մենագրության մեջ:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, ինչպես նաև ունի գրականության ցանկ (199 անուն՝ այդ թվում նաև էլեկտրոնային աղբյուրները) և հինգ հավելվածներ: Ծավալը՝ համակարգչային 143 էջ, հավելվածների հետ միասին՝ 180 էջ, որի 9 էջերում՝ միայն լուսանկարներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանությունը, աշխատության գիտական նորույթը, տեսագործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության արդյունքների փորձարկումը և կառուցվածքը:

Ատենախոսության **առաջին՝ «Թանգարանային հաղորդակցության պատմատեսական հիմքերը»** խորագրով գլուխը կազված է երեք ենթագլուխներից: Առաջին ենթագլխում («**Սոցիալ-մշակութային հաղորդակցության գործընթացները թանգարանի ձևավորման փուլերում»**) առանձնացվում է թանգարանի ձևավորման երկու հիմնական շրջափուլեր, որոնք կանխորոշում են վերջինիս ստեղծման պահանջմունքների առաջացումը և ապա ծագումն ու զարգացումը: Նախաթանգարանային և թանգարանային հավաքածուների ստեղծման ու կիրառման համատեքստում գլխավոր շեշտադրումը արտահայտվող սոցիալ-մշակութային հաղորդակցության գործընթացների վրա է դրվում: Մասնավորապես փաստվում է, որ թանգարանային պահանջմունքների ձևավորման գործընթացում թանգարանի նախատիպեր համարվող մի շարք հանրային հաղորդակցման համակարգերի (հունական և հելլենիստական մուսեոններ, միջնադարյան եկեղեցին, վերածննդի հումանիստական հավաքածուներ և այլն) գործունեության մեջ արտահայտվեցին հաղորդակցության այն նախնական ձևերը,

որոնք հետագայում նպաստեցին թանգարանի կայացմանը: Մի գործընթաց, որը զուգադրվում է հայկական համանման իրողությունների հետ:

Հաղորդակցության նախատիպային դրսևորումների վերաիմաստավորումն ու թանգարանի հաղորդակցական գործառույթի սկզբնավորումը պայմանավորվում է պատմական տարբեր իրողություններում հավաքածուները հանրության համար մատչելի դարձնելու, կրթական նպատակներին ծառայեցնելու գործընթացների ակտիվացմամբ: Մասնավորապես «թանգարան» սոցիալ-մշակութային իրողության ձևավորման պատմական շրջափուլի արտահայտման սկզբնակետ է ներկայացվում արևմտաեվրոպական երկրներում սկսված Լուսավորության դարաշրջանի գաղափարական շրջանակները, որոնք ընդգծեցին թանգարան-հասարակության հաղորդակցության և հավաքածուները հանրակրթական նպատակներով օգտագործման խնդիրը: Ենթագլխում ուսումնասիրման առարկա է 19-20-րդ դդ. թանգարանների կայացման, մասնագիտացման, պետականորեն արժևորման գործընթացները, որոնք տարբեր փուլերում ենթադրում են տարբեր հաղորդակցության գործընթացներ և կրթական գործունեության իրականացման համատեքստ: Եվ թեև ՀՀ թանգարանները՝ որպես հանրային հաղորդակցման հաստատություններ, Եվրոպայի մի շարք երկրների համեմատությամբ փոքր-ինչ ուշ ձևավորվեցին, սակայն աշխատանքում հիմնավորվում է այն հանգամանքը, որ 20-րդ դ. կեսերից արդեն վերջիններս ակտիվ գիտակրթական, սոցիալ-մշակութային հաղորդակցության կենտրոններ էին:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում (**«Հաղորդակցության տեսության զարգացումը թանգարանագիտության մեջ»**) քննության առարկա է թանգարանային հաղորդակցության տեսական պատկերացումները, որոնք թանգարանագիտության ոլորտում տեղեկատվության փոխանցման վերաբերյալ գիտելիքների ներդրման արդյունք էին:

Ենթագլխում թանգարանային հաղորդակցության տեսական պատկերացումների հետագա զարգացումը 1980-ական թթ. կապվում է յուրահատուկ թանգարանագիտական մոտեցման ձևավորման հետ: Վերջինս, ուսումնասիրման գլխավոր խնդիր համարելով թանգարան-հասարակություն հարաբերությունները, այլընտրանքային դիրք գրավեց այլ թանգարանագիտական մոտեցումների հանդեպ կամ ինտեգրվեց դրանց: Սույն տեսական մոտեցման հետևորդները (Դ. Ֆ. Կամերոն (1968), Մ. Բ. Գնեդովսկի (1989), Հ. Օսբորն (1985), Յու. Ռոմեդեր (1980), Հ. Հելենկեմպեր (1984, Ռ. Ստրոնգ (1983) և այլք) հակված են առաջադրել թանգարանային հաղորդակցության հայեցակարգային մոդելներ (ճանաչողական, գեղագիտական, նշանային, երկխոսական, միջառարկայական, տեղեկատվական-հաղորդակցական), որոնց համադրման արդյունքում նաև ձևակերպվում են այն հիմնական գիտական սկզբունքներ (հումանիստական, մշակութաբանական, երկխոսության, ասքսիոլոգիական), որոնք արդիական են թանգարանի արդի կրթական գործունեության իրականացման համար:

Ատենախոսության առաջին գլխի վերջին ենթագլխում («**ՀՀ թանգարանները՝ որպես սոցիալ-մշակութային հաղորդակցության կայացման միջավայր**») թանգարանային հաղորդակցության վերաբերյալ մոտեցումները կապակցվում է հայ թանգարանագիտական մտքի զարգացման հետ. արծարծվում է ՀՀ թանգարանների հաղորդակցության ոլորտի զարգացման ընթացքը՝ չորս փուլերով (թանգարանի լուսավորական, քաղաքականացված, տեղեկատվական և հաղորդակցական մոդելներ):

Հավաքված նյութի հիման վրա ներկայացվում է 1980-ական թթ. վերջերից ձևավորված թանգարանային հաղորդակցության մոդելի յուրահատուկ արտահայտչաձևերը հայկական թանգարանների տարաբնույթ կրթամշակութային գործունեության ոլորտում, ապա նաև ծավալուն անդրադարձ է կատարվում հետխորհրդային շրջանի իրողություններին: Ըստ այդմ՝ թանգարանային հաղորդակցության համակարգը դիտարկվում երեք սուբյեկտների (առարկայի հեղինակ-թանգարանագետ-այցելու) միջև յուրահատուկ շփման միջոց, որն ունի երկու հիմնական բաղադրատարր՝ ֆոնդադարաններում համակարգված հավաքածու և ցուցադրություն: Որպես մշակութային տեքստ՝ դրանք փոխկապակցված են և կարող են ներկայանալ իբրև մեկ ամբողջություն: Վերջինս հնարավորություն է ընձեռում հասարակության տարբեր շերտերի միջև բազմաբնույթ փոխհարաբերություններ հաստատելու, հավաքածուների մեջ խտացված պատմամշակութային ու սոցիալական նշանակության տեղեկատվությունը պահպանելու և ի նպաստ հանրակրթությանն օգտագործելու համար:

«Թանգարանային կրթահաղորդակցության մեթոդական համակարգը» խորագրի ներքո՝ ատենախոսության **երկրորդ գլխի** չորս ենթագլուխներում անդրադարձ է կատարվում հիմնական թանգարանային տեղեկատվական-հաղորդակցական միջոցներին, զարգացման մանկավարժական պայմաններին ու հեռանկարներին:

Առաջին ենթագլխում (**«Թանգարանի հավաքածուի տեղեկատվահաղորդակցական գործառույթը»**) քննարկվում է թանգարանային առարկայի որակական հատկանիշները (տեղեկատվական, արտահայտչական, գրավչության, ձգողական, ներկայացուցչական և զուգադրման), դրանց բացահայտման և զետեղարաններում համակարգման առանձնահատկությունները՝ որպես գիտատեղեկատվական ամփոփ աղբյուր և նշանային համակարգ: Վերջինս գործում է անմիջական (հատուկ կրթական նախագծեր, էքսկուրսիաներ, հատուկ ցուցադրություն, սպասարկում) և միջնորդավորված (գիտատեղեկատվական համակարգը, թանգարանային հրատարակչությունը, էլեկտրոնային տեղեկատվական միջոցները) հաղորդակցման եղանակներով:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը («**Թանգարանային ցուցադրությունն իբրև կրթահաղորդակցական միջավայր**») նվիրված է թանգարանային հաղորդակցության կայացման գլխավոր հարթակի՝ ցուցադրության բացահայտմանը՝ որպես յուրօրինակ մշակութային տեքստ, մշակութային-կրթական

գործունեության առանձնահատուկ տարածք: Վերջինիս հիմքում են դրվում *առարկայականության, գիտականության* և *հաղորդակցականության* սկզբունքները: Առաջին դեպքում մատնանշվում է առարկայի նոր գործառույթի՝ ցուցանմուշի դերը՝ որպես որոշակի բովանդակության փոխանցման նշան: Ապա գիտականության սկզբունքի հիման վրա ներկայացվում է սույն համակարգի ստեղծման հիմնական փուլերը, մեթոդները:

Ենթագլխում ցուցադրության ընկալման գործընթացը ներկայացվում է Շ. Էննիսի (1986) առաջադրած երեք հիմնական թանգարանային տարածքներով. *ենթագիտակցական, պրագմատիկ և իմացական* , որոնք, ինչպես նաև հետադարձ արձագանքի հետազոտման մեթոդները, համադրվում է ՀՀ տարբեր թանգարանների ոլորտում առկա փորձին:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում («**Թանգարանի մշակութակրթական գործունեության մեթոդներն ու եղանակները»**) ուսումնասիրության առարկա է թանգարանային ցուցադրության կրթական ներուժի օգտագործման ընդունված հիմնական ձևերը և ՀՀ թանգարաններում դրանց կիրառման օրինակները: Եթե նախորդ երկու ենթագլուխներում հիմնական շեշտադրումը թանգարանային տեղեկատվական-հաղորդակցական բազմաբնույթ միջոցների առանձին և համալիր դրսևորումների վրա է, ապա կրթադաստիարակչական մեթոդների կիրառումն առանձնակի արտահայտվում է արդի թանգարանի մշակութակրթական գործունեության որոշակի ձևերով, որոնց իրականացումը հիմնված է արդեն հիմնականում բանավոր խոսքի, կենդանի շփման գերակայության վրա: Այս առումով թանգարանի տարածքում արտահայտվող մանկավարժական գործընթացի լիիրավ սուբյեկտներն են թանգարանային մանկավարժը և թանգարանային այցելուն (հանդիսատես, սովորող), իսկ կրթական գործընթացի գլխավոր միջոցը թանգարանային միջավայրն է: Մանկավարժական գործունեությունը թանգարանի տարածքում համարվում է դաստիարակության, զարգացման և ուսուցման համադրություն՝ ուղղված անհատի գեղագիտական դաստիարակությանը, գեղարվեստական կրթությանը և ստեղծագործական զարգացմանը (Ս. Մանուկյան (2002), Լ. Ներսիսյան (2002)):

Ատենախոսության մեջ մշակութակրթական գործունեության հետագա քննությունը շարունակվել է թանգարանային մանկավարժության նշանավոր տեսաբան Մ. Յու. Յուխնևիչի (2001) առաջարկած տաս հիմնական եղանակների շրջանակում: Դրանք են՝ էքսկուրսիան, դասախոսությունը, խորհրդատվությունը, գիտական ընթերցումը, ակումբը, մրցույթը, հանդիպումները, համերգը, տոնը, թատերականացված պատմական խաղը: Վերջիններս քննարկվում են ՀՀ թանգարանների (Հայաստանի ազգային պատկերասրահ, Հ. Թումանյանի թանգարան, Երևան քաղաքի պատմության թանգարան, «Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարան և այլն) կրթական գործունեության օրինակներով: Դրանցում բացահայտվում են այն հիմնական ուսուցման ու դաստիարակության մեթոդները, որոնք հանդես են գալիս հիմնականում համալիր

եղանակներով: Օրինակ, էքսկուրսիայի ընթացքում կիրառելի են Յու. Ամիրջանյանի և Ա. Սահակյանի (2005) կողմից թվարկվող ուսուցման խոսքային /պատմել, զրույց, դասախոսություն, բանավեճ/, զննական /իլուստրացիա և դեմոնստարցիա/, գործնական /բանավոր, մեկնաբանական վարժությունների կատարում/, գործնական /դիդակտիկ խաղեր/, ինդուկիվ և դեդուկտիվ, բացատրական-ցուցադրական, վերարտադրողական, պրոբլեմային շարադրանքի, մասնակի որոնողական, հետազոտական ինքնուրույն աշխատանքի, ստեղծագործական մեթոդները: Վերջիններիս համալիր դրսևորումները հատկապես կիրառվում են մշակութակրթական ծրագրերի նախագծման ու իրականացման գործընթացներում: Այս առումով տեղին է հայտնի ռուս մշակութաբան, ավեստագիտության դոկտոր Օ. Գենիսարեցկու (1994) այն նշումը, որ նախագիծը տարբերվում է ուտոպիայից, քանի որ դրա հեղինակները լուծում են հոգևոր, վերացական արժեքների, գեղարվեստական ստեղծագործության կերպարային կամ նյութական իրացման խնդիր: Այս առումով վերջին տարիներին կրթամշակութային նախագծերի մշակումն ու ներդրումը ՀՀ թանգարանների կրթադաստիարակչական ոլորտում ուղղված են նոր մանկավարժական մեթոդների, ստեղծարար գաղափարների կիրառմանը և որոշակի լսարանների կրթական պահանջմունքների բավարարմանը: ՀՀ տարբեր թանգարանների փորձից բերված օրինակներից առանձնացնում ենք մեր կողմից մշակված «Ես կարող եմ զգալ ժամանակի շունչը» կրթական նախագիծը սահմանափակ կարողություններով այցելուների համար, որի երկրորդ փուլը 2011թ. հունիսի 10-ին իրականացվեց «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարանի տարածքում՝ նախագծման եղանակներով (տե՛ս հավելված 1, էջ 3, 7-8, հավելված 5-ում՝ լուսանկարներ 8-ից 9-ը ատենախոսության մեջ): Նախագծի շրջանակներում հատուկ լսարան էր ընտրվել Խուլ և թույլ լսող անձանց ուսուցման և սոցիալական ինտեգրման «Դիալոգ» կենտրոնի տարբեր տարիքի (13-ից մինչև 59-ը տարեկան) լսողական խնդիրներով շահառուների խումբը (13 հոգի), ովքեր ծրագրի ավարտին լրացրել են հարցաթերթիկներ և որի ամփոփումը ներկայացվում աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

«Ես կարող եմ զգալ ժամանակի շունչը» կրթական նախագիծի երկրորդ փուլի արդյունքների ամփոփումը՝ ըստ լրացված հարցաթերթիկների

Հարցի բովանդակությունը	*Դրական պատասխաններ*	*Բացասական պատասխաններ*	*Այլ կարծիքներ*
1. Մինչև այցելությունը տեղյա՞կ եք եղել Գառնիի վերաբերյալ	8	5	-
Այցելության ընթացքում տպավորվել եք .	ա/ 12 բ/ 13	0	-

ա/ Ծրագրի կազմա-կերպումից բ/ Բացատրությունից և մատչելիությունից գ/ Հուշարձանների հետ անմիջական շփումից դ/ Այցելությունից տպավորված չեք	գ/ 12		
2. Արգելոց-թանգարանի տարածքում ի՞նչ խոչընդոտներ եք տեսնում ինքնուրույն այցելելու դեպքում. ա/ Տեղեկատվության պակասը բ/ Երթուղու հստակությունը և հարմարավետությունը գ/ Հանգստի գոտիների պակասը դ/ Խոչընդոտ չեմ տեսնում	ա/ 11 բ/ 12 գ/ 12	0	-
3. Հաջորդ անգամ կայցելե՞ք Գառնի, խորհուրդ կտա՞ք Ձեր ընկերներին այցելել	13	0	-

«Տպավորություններ, կարծիքներ, ցանկություններ» ազատ թողնված մասում արձագանքող մասնակիցների մեծ մասն իր գոհունակությունն է հայտնել, նաև առաջարկվել է նախագիծն իրականացնել պարբերական ընթացքով:

Ենթագլխում առանձնակի ընդգծվում է այն եզրահանգումը, որ թանգարանային բազմաբովանդակ միջավայրը հնարավորություն ունի համատեղելու տարբեր նշանային համակարգեր, ներգրավել սոցիալ-մշակութային տարբեր ընկալման ունակություններով սուբյեկտների և այդպիսով արդեն համընդհանուր կրթական առաքելություն ունի: Այնուհանդերձ հաղորդակցական նպատակային գործընթացները հատկապես արտահայտելի են ինտերակտիվ, համալիր և ծրագրավորված կրթամշակութային միջոցառումների ենթատեքստում, որն արդեն կազմակերպված մանկավարժական գործընթաց է՝ արտահայտված թանգարանային միջավայրով, մանկավարժների և սովորողների յուրահատուկ փոխշփումներով: Այս առումով արվեստի տարբեր տեսակների կիրառումը թանգարանում մի կողմից ուղղված են դրա հաղորդակցական միջոցների ձևավորմանը, մյուս կողմից անհատի զարգացմանը և գեղագիտական

դաստիարակությանը, զգայական ունակությունների և ընկալումների ընդլայնմանը, հոգևոր պահանջմունքների ձևավորմանը և բավարարմանը: Նման համատեքստում արդյունավետ հաղորդակցական համակարգերի են վերածվում թանգարան-դպրոց համադրությունները կամ ուսումնական կենտրոններ ունեցող թանգարանները և թանգարան ունեցող ուսումնական հաստատությունները:

Երկրորդ գլխի չորրորդ ենթագլխում **(«ՀՀ թանգարանների տեղեկատվական-հաղորդակցական գործունեության զարգացման մանկավարժական պայմանները»)** թանգարանի տեղեկատվական-հաղորդակցական գործունեության հեռանկարներն առաջնահերթորեն առկախվում են թանգարանային անձնակազմի ունակություններից: Թանգարանային հաղորդակցության տեսության ներքո թանգարանը դիտարկվում է որպես միջմասնագիտական համագործակցության գիտագործնական ոլորտ: Վերջինիս բնորոշ է թանգարանի նեղ մասնագիտացման բնագավառի իմացության և թանգարանային գործառույթների արդյունավետ իրականացման հմտությունների համադրությունը, որն անձնակազմի ձևավորման ու գործունեության ընթացքում վերածվում է տարբեր մասնագետների սերտ փոխգործակցության: Սույն հանգամանքը նաև թանգարանագիտական ընդհանուր գիտելիքների պահանջարկ է առաջադրում, որն առնչվում է թանգարանի զարգացմանը, գործունեության ուղղությունների կառավարմանը և հաղորդակցության գործընթացների կազմակերպման ընդհանուր օրինաչափություններին, դրանց ուսումնասիրությանը և կիրառմանը: Ուստի, ՀՀ հետխորհրդային սոցիալ-մշակութային իրադրությունը նաև թանգարանային ոլորտի կադրերի պատրաստման նոր կրթական չափորոշիչներ է ենթադրում, որոնք կարևորվում են կազմակերպչական և տեսական մի շարք հարցերի վերաիմաստավորումը, նոր աշխատանքային մեթոդների մշակումը: Այս ուղղությամբ ենթագլխում ընդգծվում է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Թանգարանագիտության և հուշարձանագիտության ամբիոնի դրական փորձառությունը, որի ուսումնական ծրագրերը 2009-2010 թթ. սկսած անընդհատ ընդլայնվել են՝ ներառելով թանգարանային գործի նեղ մասնագիտացված բնագավառների ուսուցումն ու գործնական ոլորտում ուսումնասիրումը: Գիտակրթական ոլորտի արդիականացման տարբեր գործընթացներում թանգարանային անձնակազմի պատրաստման առումով կարևորվում են նշյալ մասնագիտական ամբիոնի և թանգարանների հետագա համագործակցությունը: Անձնակազմի գործոնը կարևորվում է նաև թանգարանային մասնագետների վերապատրաստման առումով:

ՀՀ մարզային դպրոցներում թանգարանների և «պատանի թանգարանագետ» խմբակների կազմակերպումը կարող է վերածվել տարբեր համայնքներում առկա պատմամշակութային ժառանգության արժևորման սկզբնակետը: Գործընթաց, որը կարող է նաև իրականացվել մարզերում գործող թանգարանների նախաձեռնությամբ՝ փոքրածավալ կրթական նախագծերի իրականացման տարբերակով: Նմանատիպ օրինակ կարող ենք համարել մեր կողմից 2012թ. նոյեմբեր

ամսին իրականացված «Միասին բացահայտենք մեր մշակութային արժեքները» կրթական ծրագիրը (տե՛ս հավելված 2, հավելված 5՝ լուսանկարներ՝ 13-ից 17-ն ատենախոսության մեջ): Մարզային դպրոցներում թանգարանային տարածքների հիմնումը թույլ կտա սովորողների և մանկավարժների համագործակցությամբ ստեղծել տվյալ համայնքի հիշողության և ժառանգության պահպանման, ուսումնական տարածք, միջնակարգ դպրոցների լրացուցիչ առարկայացանկում ներառված «Մշակույթի պատմություն», «Արվեստի պատմություն», «Բարոյագիտություն», «Բանահյուսություն», «Գեղագիտություն», «Հնագիտություն», «Ազգագրություն» առարկաների դասավանդման, ինչպես նաև արտադասարանային ստեղծագործական խմբակների գործունեության միջավայր: Առաջարկվող դպրոցական թանգարանը նպատակ չի հետապնդում այսօր մի շարք դպրոցներում առկա «փառքի անկյունները» կամ պլակատային ցուցադրությունները համալրել նորերով, ընդհակառակը, այն պետք է ակտիվ գիտակրթական կենտրոնի վերածվի և հիմք դառնա հետագայում *համայնքային արգելոց-թանգարանների* ստեղծման համար:

Գեղագիտական դաստիարակության համալիր մոտեցման շրջանակներում հատկապես մեծաքանակ հավաքածուներ ունեցող թանգարանների հետագա վերափոխումը տեղեկատվական-հաղորդակցական լիարժեք գործող համակարգերի դիտարվում է թանգարաններին կից կրթամշակութային կենտրոնների հիմնադրումով: Նմանօրինակ կրթամշակութային կենտրոնի հիմնման նախաձեռնություն կարող է լինել մեր կողմից դեռ 2011թ. մշակված և Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտին ներկայացված «Մատենադարանի կրթամշակութային կենտրոն» նախագիծ-առաջարկը (տե՛ս հավելված 4-ն ատենախոսության մեջ):

Ատենախոսության այս ենթագլխում շեշտվում է, որ ՀՀ թանգարանների հեռանկարային զարգացումը պայմանավորվում է թանգարանագետ-մասնագետների որակյալ կրթության, վերապատրաստման և հավաքածուների արդյունավետ օգտագործմամբ նոր թանգարանային մոդելների ներդրման գործընթացներով: Վերջիններս առկախված են այն յուրահատուկ մանկավարժական պայմաններից, որոնք մասնագիտական կրթության, դպրոցական թանգարանների և թանգարանային կրթամշակութային կենտրոնների ստեղծման միջոցով կապահովեն ՀՀ թանգարանների լիարժեք գործունեությունը՝ որպես տեղեկատվական-հաղորդակցական համակարգ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս հանգել հետևյալ իրողություններին.

1. *Թանգարանային պահանջմունքների* ձևավորման և փոփոխության գործընթացները հիմք են հանդիսանում թանգարանի կայացմանը և հետագայում անընդհատ փոխակերպմանը: Այս առումով Հայաստանում ևս նախաթանգա-

ռանային հավաքածուների ստեղծման ու օգտագործման համատեքստում հաղորդակցման գործընթացները դրսևորվեցին հնագույն ժամանակներից, որոնք *թանգարանային պահանջմունքների* փոփոխության արդյունքում հիմք դարձան թանգարանի կայացմանը՝ որպես յուրօրինակ *սոցիալ-մշակութային հաղորդակցության համակարգ*:

2. Թանգարանային հաղորդակցության տեսական պատկերացումներով թանգարանագիտության ոլորտում առաջնահերթորեն կարևորվեց թանգարանային այցելուի ուսումնասիրման, ընդհանրապես թանգարանային գործում նրա դերի բարձրացման խնդիրները:

3. Ատենախոսության մեջ հակված ենք հայ իրականության մեջ արմատավորվել այն տեսակետը, որ թանգարանը՝ իբրև տեղեկատվական-հաղորդակցական համակարգ, կազմակերպված միջավայր է, որտեղ տարբեր հասարակական և մասնագիտական խմբերի միջև տեղի է ունենում յուրահատուկ փոխազդեցություն: Իսկ նշված համակարգի գործառույթներն իրականանում են հիմնականում երկու բաղադրատարրերի կամ հաղորդակցության միջոցների՝ ֆոնդադարաններում պահվող հավաքածուներով և արդյունավետ գործարկվող ցուցադրությամբ:

4. Թանգարանի ֆոնդային հավաքածուն, որտեղ առաջնահերթորեն դրսևորվում է թանգարանային առարկան, հանդես է գալիս որպես նշանային համակարգ, հաղորդակցական միջավայր, որն ունի իր յուրահատկությունները, կարող է հանդես գալ որպես անմիջական և միջնորդավորված տեղեկատվական-հաղորդակցական համակարգ, թեև հիմնականում հատուկ ռեժիմներով պահպանվող տարածք է, որը գիտականորեն համալրվում և համակարգվում է՝ օժանդակելու թանգարանի կրթական առաքելության իրագործմանը:

5. Թանգարանային ցուցադրությունը մշակութային տեքստ է և հանդիսանում է թանգարանի ավանդական հաղորդակցության միջոցը: Ըստ այդմ՝ թանգարանային առարկաները հանդես են գալիս որպես նշաններ և խորհրդանշաններ, ցուցադրությունը՝ առարկայական-տարածական հաղորդագրություն, որը ծառայում է տարբեր մշակութային դիրքերից հանդես եկող սուբյեկտների հաղորդակցությանը: Վերջինս այն հիմքն է, որով ընդհանրապես թանգարանը վերածվում է մի իմաստավորված տարածության, որի նպատակն է ձևավորել գեղարվեստական աշխարհայացք, փոխանցել արժեհամակարգեր՝ հաշվի առնելով իր տարաշերտ լսարանի ընկալման տարբեր հնարավորությունները:

6. Ուսումնասիրության արդյունքում թանգարանային հաղորդակցության հեռանկարները տեսնում ենք ոլորտում մանկավարժական գործընթացների ակտիվացման պայմաններում: Վերջիններս նպատակային գործոններ են թանգարանի գլխավոր ռեսուրսի՝ թանգարանի որակյալ և բանիմաց աշխատակազմի ձևավորման, ապա կատարելագործման համար :

7. Թանգարանի տեղեկատվական-հաղորդակցական գործունեության հեռանկարում են նաև թանգարանային նոր ու արդյունավետ մոդելների ներդրումը:

Մասնավորապես, հիմք ընդունելով «նոր թանգարանագիտության» մշակած մեթոդները, համադրելով մեզանում առկա թանգարանացման գործընթացներին՝ հնարավոր է ստեղծել նոր տիպի թանգարան (համայնքային արգելոց-թանգարան): Վերջինս առնչվում է մանկավարժական մեկ այլ բնագավառի զարգացմանը՝ հանձինս ՀՀ մարզերում դպրոցական թանգարանային ցանցի ձևավորման և դրանց կրթամշակութային ներուժի օգտագործման: Միաժամանակ խոշոր թանգարաններին կից կրթամշակութային կենտրոնների հիմնումը՝ կարևորվում է թանգարանային հաղորդակցության արդի սկզբունքերի հիման վրա ուսումնադաստիարակչական նպատակային գործընթացների ծավալման առումով:

8. Արդի ՀՀ թանգարանների ընկալումը որպես տեղեկատվական-հաղորդակցական համակարգեր և դրանց հետագա զարգացումը համահունչ են ընթացող սոցիալ-մշակութային գործընթացներին, առկա հոգևոր պահանջմունքներին: Իր գործառույթների լիարժեք իրականացման միջոցով թանգարանը կարող է վերածվել մշակութային հաղորդակցության, կրթական և ընդհանուր կենսամակարդակի բարձրացման արդյունավետ մեխանիզմի: Վերջինիս զարգացման ճանապարհը կանխորոշվում է համապատասխան մանկավարժական պայմանների զարգացմամբ:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Պողոսյան Դ. Ա., Թանգարանը որպես հաղորդակցության միջոց, ձևավորման նախնական փուլ (համառոտ պատմական ակնարկ), «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2007, № 1(30), էջ 186-192:
2. Պողոսյան Դ. Ա., Թանգարանը որպես հասարակական հաղորդակցական համակարգ (համառոտ պատմական ակնարկ, 18-20 -րդ դդ.), «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2007, № 2(31), էջ 164-171:
3. Պողոսյան Դ. Ա., Թանգարանների մշակութային-կրթական գործունեությունը որպես թանգարան-հասարակություն համագործակցության կարևոր միջոց, «Մանկավարժական միտք», Երևան, 2007, № 3-4, էջ 52-58:
4. Պողոսյան Դ. Ա., Թանգարանը մշակութային հաղորդակցության միջավայր, Եր., հեղ. հրատ., 2008, 216 էջ:
5. Պողոսյան Դ. Ա., Թանգարանային ցուցադրությունը՝ իբրև հաղորդակցական-կրթական միջավայր, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2008, № 3 /623/, էջ 210-219:
6. Պողոսյան Դ. Ա., Հաղորդակցական տեսության զարգացումը թանգարանագիտության ոլորտում, «Թանգարան» գիտատեսական և մեթոդական հանդես, Երևան, 1# 2009, էջ 26-32:
7. Պողոսյան Դ. Ա., Թանգարանային հաղորդակցության միջավայրի զարգացման հեռանկարը. համայնքային արգելոց-թանգարան, «Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, Երևան, 2010, էջ 15-21:

8. Պողոսյան Դ. Ա., Հին Խնձորեսկի թանգարանացման հարցի շուրջը, «Հուշարձան» պատմամշակութային ժառանգության մատենաշար, տարեգիրք «է», Երևան, 2011, էջ 118-122:
9. Պողոսյան Դ. Ա., Սահմանափակ կարողություններով անձանց հաղորդակցությունը մշակութային ժառանգությանը («Ես կարող եմ զգալ ժամանակի շունչը» կրթական նախագծի փորձառությամբ), «Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, Երևան, 2011, էջ 79-89:
10. Պողոսյան Դ. Ա., Թանգարանային ցուցադրությունը՝ որպես պատմամշակութային ժառանագության մեկնաբանման միջավայր ՀՀ թանգարանների գործունեության համատեքստում, «Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2012, էջ 150-151:

ПОГОСЯН ДАВИД АЛЬБЕРТОВИЧ

МУЗЕЙ КАК ИНФОРМАЦИОННО-КОММУНИКАЦИОННАЯ СИСТЕМА: ФУНКЦИИ, ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ (НА ПРИМЕРЕ МУЗЕЕВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ)

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 -«Методика преподавания и воспитания».

Защита состоится 26-ого марта 2015 г. в 12:00 на заседании специализированного совета по педагогике 020 ВАК при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010 Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Значительная часть действующих музеев и музейная система Республики Армения были созданы в прошлом веке в результате советской культурной политики. Как учреждение, включенное в культурно-просветительскую сеть, в советские годы музей предполагал также идейное воспитание и пропаганду политических взглядов. Тем не менее, параллельно своей непосредственной миссии, в условиях покровительства и поддержки государства, музеи стали доступными для всех слоев общества, учереждениями, осуществляющими социально-культурную коммуникацию. Вместе с тем, музейная жизнь советского периода и периода независимости как целостность не подверглась системному анализу в контексте оценки и интерпретации духовных и социальных потребностей культурного наследия общества. Одной из задач, возникшей в постсоветские годы, стало изучение и переосмысление основных сфер деятельности, тенденций и перспектив развития музеев Республики Армения. В настоящей диссертации музей рассматривается как своеобразная информационно-коммуникационная система, осуществляющая социально-культурные функции. Такой подход позволит повысить эффективность музейного дела и сформировать новое научное восприятие осуществления всеобщей образовательной миссии музея.

Цель исследования. Выявить и обосновать функции и перспективы развития действующих на территории РА музеев как информационно-коммуникационных и культурно-образовательных систем.

Объект исследования. Социально-коммуникационный процесс в музейной среде.

Научная новизна исследования.

- На основании научного подхода создана новая методология для музеев РА и оценена их новая образовательная миссия.
- Разработана новая концепция развития музеев Республики Армения.

- Выявлены и теоретически обоснованы функции музеев РА как информационно-коммуникативных систем, перспективы их развития.

Теоретическое значение исследования. Настоящее исследование, составленное на основе исследования и сопоставления достижений музееведения, культурологии, музейной педагогики и других сфер науки, может дополнить недостаток среди имеющихся теоретических, методических работ в области музеологии, в особенности, в процессе организации экспозиций и различных видов культурно-образовательной деятельности музеев.

Исследование важно для дальнейшего разностороннего изучения музейного дела РА или его отдельных сфер. В частности, впервые исследуется проблема использования способов образовательных (учебных) ресурсов музеев в области педагогических наук.

Практическое значение исследования. Настоящее исследование является методической основой для осуществления различных совместных программ, сотрудничества между музеями и учебными заведениями и подчеркивает важную роль музея в различных учебно-воспитательных процессах.

Практическое значение исследования заключаеться также в реализации основных положений работы в различных вуз-х РА в процессе организации музееведческого образования.

На защиту выносятся следующие положения

1. Изменения, происходящие в постсоветские годы, делают наиболее целевым рассмотрение музеев РА как системы социально-культурных коммуникаций.
2. Эффективность действия современного музея обусловливается двумя факторами развития музея – это та группа субьектов (персонал), благодаря исследованию и деятельности которой создается и постоянно действует среда музейной коммуникации. Второй главный ресурс – музейная коллекция, формирование и результативное использование которой также обусловлены деятельностью музейного персонала.
3. Подготовка и переподготовка музейных кадров, разработка программ и новых практических методов управления, реализация программ считаются целевыми основным направлением для эффективного использования коллекций и внедрения новых музейных моделей.

Апробация исследования. Представленные тезисы прошли определенную практическую профессиональную, педагогическую апробацию.

Экспертиза работы прошла на кафедре Теории истории искусства и культурологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна.

Положения, представленные в различных главах работы, были изданы в монографии и девяти научных статьях.

Структура диссертации. Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка литературы (199 наименований) и 5 приложений.

DAVIT A. POGHOSYAN

MUSEUM AS AN INFORMATION-COMMUNICATION SYSTEM: FUNCTIONS AND PROSPECTS (WITH SPECIAL REFERENCE TO THE MUSEUMS OF THE REPUBLIC OF ARMENIA)

Thesis for Degree of candidate of Pedagodical sciences, specialty 13.00.02.- "Methods of Teaching and Education".

The official defence of the thesis will take place on March 26, 2015 at 12:00, during Higher Attestation Commission's 020 Degree-awarding Scientific Council's session at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan (Address: Tigran Mets 17, Yerevan 0010)

SUMMARY

The relevance of the research. The majority of the museums operating in the Republic of Armenia, along with the museum system, were created in the previous century as a result of the soviet cultural policy. As an institution included in the cultural and educational network structure, the museums also assumed the background education and propaganda based on soviet ideology. However, in parallel with their main mission and under conditions of state support and funding, the museums had become socio-cultural institutions accessible for all public sectors. Nevertheless, in spite of the overwhelming impact, the museum life neither of the Soviet period, nor after gaining the independence has been submitted to a systematized and integral analysis within the context of spiritual and social needs of society and appropriate evaluation and vision of the cultural heritage left.

Among other major issues of post-soviet period the one that still needs attention is the scientific and re-evaluated study of the main activity domains, development tendencies and prospects of the museums of the Republic of Armenia. In this regard, this dissertation is an attempt to observe the museum as a distinctive information-communication system practically facilitating specific socio-cultural functions. This approach is aimed at increasing the effectiveness of the museum activities in order to form a new scientific understanding of the educational mission of museums.

The aim of the research: The research is to identify and expound the functions and development tendencies of Armenian museum as information-communication and cultural-educational system.

Object of the research is the process of expressing socio-cultural communication in the museum ambience.

Scientific novelty of the research:

- A new conception has been worked out in connection with the development of museums of the Republic of Armenia.

• The functions and development prospects of the museums of the Republic of Armenia have been revealed and theoretically authenticated with regard to the museum as an information-communication system.

• The new educational mission of Armenian museums has been scientifically evaluated.

The theoretical significance of the research. As a result of interdisciplinary combination of Museology, Cultural Studies, Museum Pedagogy and other relevant scientific fields, this research can fill the current lacuna in the sphere of theoretical and methodological investigations in the Armenian Museum Culture, especially, in various forms of organizing expositions, cultural and educational activities.

The study may be of further contribution to advanced comprehensive and distinct investigation of different spheres of museum work. Especially in the field of Pedagogical Sciences, this research introduces the very first systemized discussion of potential use of museum's educational methods in Armenia, opening up, thus, progressive perspectives for new researches.

The practical significance of the research. In terms of cooperation between museums and various educational institutions, as well as for joint project implementation, the research puts forward pertinent methodological bases with special emphasis on the key role of museums in different educational processes.

The research contains practically core ideas to make use of in organizing the Museological education in different universities of the Republic of Armenia.

The following postulates are set forth to the defence.

1. Changes in the post-soviet period is marking the significance to observe the museums as socio-cultural communication systems.
2. The effectiveness of modern museum's activity depends on two main resource development factor:

•The museum's development potential derives from the group of people (staff), whose activities and research creates and continuously operates the museum environment.

•The second major resource is the museum collection, which formation and effective use are due to the museum staff activities, purposes.

3. From the perspectives of the effectiveness of the use of collections and new museum model implementation, the training of personnel, new management and practical methodology development and implementation are of current priority.

Approbation of the study results. The provisions forwarded in the research were submitted to expertise in museum-based educational programs, in the field of higher education, research and trainings for professional debates.

The investigation passed the preliminary expertise at the Chair of Art History, Theory and Culturology of Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan.

9 scientific articles and 1 monograph are published on the subject matter of the thesis submitted.

Structure of research: The thesis consists of an introduction, two chapters, conclusion, as well references (199 itemized titles) and five appendices.